# Տասներորդ ավարտական արարողությունը Հայաստանի ամերիկյան համալսարանում

Հայաստանի ամերիկյան համալսարանի մեծ դահլիճում կիրակի օրը տեղի ունեցավ թվով տասներորդ ավարտական հանդիսավոր արարողությունը: Դահլիճը լեփ-լեցուն էր հյուրերով: Ներկա էին պատվավոր հյուրեր Հայաստանի կառավարությունից, արտասահմանյան ներկայացուցչություններից եւ դեսպանատներից, տեղական եւ միջազգային կազմակերպություններից: Արարողությունն սկսվեց 2002 թվականի շրջանավարտների տոնական շքերթով, որին հետեւեց համալսարանի նախագահի, քոլեջների դեկանների եւ դասախոսների հանդիսավոր մուտքը դահլիճ: Հնչեցին Հայաստանի Հանրապետության եւ Մ. Նահանգների ազգային օրհներգերը, որից հետո Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդ Նավասարդ եպս. Կճոյանը շրջանավարտներին հղեց Ամենայն հայոց կաթողիկոսի օրհնանքն ու շնորհավորանքները: Համալսարանի նախագահ դոկտ. Հարություն Արմենյանը ողջույնի խոսքում ուրախությամբ նշեց, որ համալսարանը դարձել է կրթական կենտրոն նաեւ սփյուռքահայ երիտասարդների համար:

Գիտության եւ կրթության նախարար Լեւոն Մկրտչյանը բարձր գնահատեց ամերիկյան համալսարանի գործունեությունը, որը Հայաստանում արմատավորեց կրթական բարձր որակ: Համալսարանի շրջանավարտներն այսօր լավագույն կադրերն են համարվում մի շարք բնագավառներում: Հայաստանի կրթական համակարգը ձգտում է պահպանել համահայկական կրթական չափանիշները, որոնք հազարամյակների պատմություն ունեն: Նա շեշտեց, որ Հայաստանում գործող միջազգային համալսարանները, որոնց թվում են ամերիկյան, հայ-ֆրանսիական, հայ-սլավոնական եւ մյուս համալսարանները, նպաստում են քաղաքակրթությունների երկխոսությանը: Նախարարը հույս հայտնեց, որ ամերիկյան համալսարանը կշարունակի կրթական բարձր մակարդակով ստեղծած մրցակցությունը պահպանել, դրանով իսկ նպաստելով հայկական բուհերի կրթական մակարդակի բարձրացմանը:



Ջոն Հոփքինս համալսարանի Բլումբերգ հանրային առողջապահության բաժնի դեկան դոկտ. Ալֆրեդ Սոմմերը ներկայացրեց ամերիկյան համալսարանում այս տարվանից իրականացվող հանրային առողջապահության ծրագիրը:

Կոմիտասի «Քելե-քելե» եւ Ջ. Լակալիեի «Ամապոլա» երաժշտական կատարումից հետո (մենակատար՝ Մ. Մկրտչյան, նվագակցող՝ Մ. Մելքումովա) շուրջ 100 շրջանավարտներ ստացան մագիստրոսի կոչում եւ վկայագրեր: Նրանցից 38-ը ստացան գործարար ղեկավարման, 21-ը՝ քաղաքագիտության, 6-ը՝ համեմատական իրավական ուսմունքների, 6-ը՝ իրավագիտության, 13-ը՝ արդյունաբերական ճարտարագիտության եւ համակարգերի կառավարման մագիստրոսի կոչում, իսկ 15-ը՝ անգլերենը որպես օտար լեզու դասավանդելու վկայագիր:

Համալսարանի նախագահի շնորհավորական խոսքերից հետո, ավանդույթի համաձայն, երջանիկ շրջանավարտներն իրենց գլխարկները նետեցին օդ՝ արտահայտելով իրենց մեծ ուրախությունը տոնական օրվա կապակցությամբ: Բրամսի «Ակադեմիական տոնական նախերգանքի» եւ Շտրաուսի «Ռադեցկի քայլերգի» հնչյունների ուղեկցությամբ ավարտվեց հանդիսավոր արարողությունը:

ՌՈՒԶԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ